



# ԲԱԶԱՐԱԿԵՊ

Ը. ՏԱՐԻ. ԹԻՒ 17.

1850

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1.

## ԲԱՐԱՑԱԿԱՆ

ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հոդի և Գրտահյութիւն :

ԽՐԲՈՐ առանձնացեալ նոտեր կը  
մտածէի հոգւոյ կրից և խղձի վրայ,  
և անոնց հակառակութեանցը վրայ  
միտքս կը տանջուէր, յանկարծ իմբաւ  
րի ոգիս՝ որ անշուշտ իմ գիտակցութիս  
պիտի ըլլայ, երեցաւ ինձի՝ այս հին  
առածս ըսելով “Դյանիր զքեզ..” . և  
կամացուկ մը իր լուսափայլ ձեռուընե-  
րովն աչքիս դպչին ու աներեսոյթ ըլ-  
լալը մէկ եղաւ : Ո)էկէն ՚ի մէկ աչուը-  
ներս անանկ բացուեցան՝ որ իմ հոգւոյս  
և մարմնոյս մէջ եղածները սկսայ տես-  
նալ զարմանալի օրինակով մը, որ ձեզի  
պատմեմ:

Խա զիս գտայ մէկ տէրութեան մը  
մէջ, ուր բնակիչներն էին վառվրուսն,  
զգայուն, դիւրազրգիռ և անզադար

բանի գործի հետ զւաղած՝ միշտ զուար-  
ծութիւն փնտուելով և ցաւէ փախչե-  
լով. ասոնք միայն էին իրենց աստուած-  
ները, իրենց կուռքերը : Ենոնց երկիրը՝  
ինչպէս ուրիշ շատ երկիրներ՝ զուարձա-  
լի տեսք մը ուներ, շատ ջրանցքներով  
ուռզած և պտղաբերած . եղանակը  
բարեխառն տաքուկ, բայց քիչ մը փո-  
փոխական և ստէպ ստէպ փոթորիկներ  
հանող, և անանկ սաստիկ փոթորիկ-  
ներ, որ կարծես թէ երկինք գետին  
իրար պիտի անցընեն :

Տեղացոց բարգը նկարագրել շատ դը-  
ժուար է . վասն զի ոչ բոլորովին մաքուր  
և ոչ ալ բոլորովին աւրուած էին . շատ  
զանազանութիւն և անհաստատութի  
կ'երեւար ասոնց մէջ . ազնուական մը-

տածմունքներ և անհանդարտ փափաքներ, հետութեան ախորժակ, սէր փառաց, մարդասիրութիւն, հպարտութիւն, քաղցրութիւն, և բարկութիւն, կը կուրտէին իրարու վրայ ելլալու և բոլոր տէրութիւնը կը խոռովէին. մանաւանդ որ այս զարմանալի աշխարհքիս մէջ՝ ամէն բան հասարակաց էր, առանձին ստացուածք չկար. և որովհետեւ ամէն բան ընդհանուր էր՝ ամէն գործ ալ հասարակաց հաւանութեամբ կ'ըլլար, և մէկ ընդհանուր կամքով մը :

Իսյց հինգ գլխաւոր անձինք որ միայն իշխանութիւն ունէին օտար աշխարհքներու հետ առնելու տալու, հասարակաց կամքին վրայ ալ մեծ ազդեցութիւնէին, ասոնք Օգայութիւնք կ'ըսուէին և տիրաբար կը հրամէին. բայց իրենք ալ միաբան կ'երևային ուրիշ մեծամեծ տէրանց՝ որոնց Այսոք կ'ըսէին, և քանի մ'ալ սպաշտոնէից՝ Խիզք՝ ըսուած, որոնք անոնց հրամանին հնազանդելով՝ շատ հեղ խելքէ դուրս բռնաւորական բաներ ալ կը կատարէին. Այս Խիզքերուն մէջ ալ հակառակութիւն կար. ոմանք ազնուական, մեծ և վսեմ էին և աղէկ խորհուրդներ կու տային. ոմանք ալ՝ որ աւելի բազմաթիւ էին՝ ցած, անարդ և անզգամեւ գէշութեն խրատու էին :

Անջի բերան կարծելով թէ աս թը շուտառ տէրութիւնը հասարակապետութեամբ կը կառավարի՝ շատ տիրեցայ, վասն զի պէտք էր որ շատ անդամ կուսակցութեան և անիշխանութեան խոռվութեանց տակ իյնար. բայց բաղզով՝ ազնուական կրքերէն մէկն՝ որ միշտ մըրիկները հանդարտեցընել և ճշմարիտ խաղաղութիւն և երջանկութիւնը հաստատել կը ջանար, իմացուց ին:

1 Գաղղիացի հեղինակը եր լեզուին յատկութենէն սփառուած է՝ այս կրքերուն և ախտերուն անոնց արական ոմանց իդական անձն տալ, որով մեծ անյարմարութիւն մը կ'ելլայ՝ տէրութեան պաշտօնէից մեծ մասը կնիկ գնելով. անոր համար մէնք սմէնն ալ արական դրէնք. նոյնպէս թագաւորն ալ, որ ինքը թագուհի կ'ըսէ՝ միայն անոր համար որ Առու (Հոգի) իդական սեռ ե՛ս ունող եղուաց մէջ :

ծի որ տէրութիւնը միապետական էր. և կառավարն էր երկրնքէն իջած ոգի մը՝ որ աստուածային կամք դատապարտած էր հոն կենալու երկայն կամկարծամանակ մը, շատ հեղ ինչուան մօտ 100 տարի, որ այս արգելական տեղայս մէջ կառավարէ իր թնութենէն շատ ցած էակներ. և արգելանէն վերջն ալ մեծ վարձք կամ մեծ պատիժ պիտի ընդունէր Այսուծմէ՝ այս գժուարին կառավարութեան մէջ բանեցուցած կերպին համեմատ :

“ Ե՞նչպէս դժուարին, ըսի, խոսքը կտրելով. ինձի կ'երևայ թէ այդ ոգին ամեննեին արգելք պիտի չգտնէ իր կամայը, որովհետեւ այնպէս վեհագոյն է իր հպատակներէն. ասոնք ալ չեմկարծեր որ այնչափ կոյր ըլլան՝ որ զիրէնք անոր հետ բաղզատեն, կամ այնչափ խենթ ըլլան՝ որ անոր դէմկենան: Ի՞ տուած օրէնքները մէկմէկ պատզամ պէտք է սեպուին, ամէնքն ալ ծառայի պէս հնազանդին և պաշտեն զինքը ”:

“ Շատ կը խարսուիս, ըսաւ առաջնորդս. այն լիգին որ բուն Հոգի կ'անուանի, ատանկ զիւրին պաշտօն մը չունի. աստուածային վՃիռը որ զինքը մեզի իշխան գրաւ, պարտաւորեց զինքն ալ մեր երջանկութիւնը և իր արգիւնքը կամ պատուհասը ապահովելու համար, որ հաղորդի մեր բերմանցը. սերտ կապուած է ինքն ալ մեր նիւթական և ապականնեալ բնութեան հետ. մեր ցաւերը կը քաշէ, մեր զուարձութիւններն կը վայլէ, իր հրամանները չուուած՝ որոնք հասարակաց կամք կ'ըլլան, պէտք է որ լսէ. Օգայութեանց ձայնը, Խիզք գոչումը, իմանայ մեր պիտոյքը, զգայ մեր փափազները, և վերջը որոշէ ինչ որ լնելի է կամ չընելի, ինչ որ արգիւնը է կամ թոյլտարու: Այս երթանքի ատեանը, և տեսնես իր խարհրդարանը. միայն հիմքիուց կ'ըսէմ որ շատ խառնակութիւն պիտի տեսնես հոն, որովհետեւ ամէնքն ալ իրաւունք ունին հոն մտնելու և խօսելու . . . :

Այս խօսքը զարմանքս աւելցուց. ձայնս կտրեցի և առաջնորդիս ետեւին:

կ'երթայի քիչ մը անհանգիստ կերպավ .  
որովհետև քանի մը բիրտ անձինք ու-  
զեցին զիս կեցրնել լոտօնանի՝ ըսուած  
տեղ մը , ըսելով թէ հոն և իշխանը :  
լորիներն ալ՝ որ այլանդակ խենթեր  
կ'երեային՝ կ'ըսէին թէ փուռ ճամբայ  
կ'երթաք . Հոգի ըսած բանդ չկայ :  
լոյս երեսս գարձուցի ասոնցմէ՝ վրանին  
ցաւելով ու առաջ անցայ : լոյս մ'ալ  
տեսնամ՝ պղտի լիրք մը՝ փափուկ ու  
զրոսուկ՝ ձեռքէս բռնեց և կ'աղաջէր որ  
լիրտ ըսուած տեղէն դուրս չելլամ :  
Եւ յիրաւի , հոն տեղ տեսայ այնչափ  
բազմութիւն երթեւեկի , որ երկրին  
ամենէն բանուկ տեղն սեպեցի , և ծանր  
չէր գար ինծի հոն մնալը . բայց առաջ-  
նորդս պատուիրեց որ ետևէն երթամ .  
պէտք եղաւ որ հնազանդիմ : Դասցինք  
հասանք բարձրագիր տեղ մը , ուր որ  
բոլոր տէրութեան մէջ եղած ջրանցք-  
ներն և ճամբաներն կը վերջանային :  
Դայնպիսի լուսաւոր տեղ տեսած չէի  
ես , և սակայն մէջի բաները մշուշ կ'ե-  
րեային . անշուշտ լցուերու բազմու-  
թիւնն էր որ աշխա կ'առնուր . ամէն  
տեսակ լուսաւոր կար , մեծ ու պղտիկ ,  
պարզ ու գունաւոր . բռնկած կրակ-  
ներ , մոլեկան հուր , հանդարտ լցուեր ,  
ճաճանշաւոր փայլակներ , թռչուն բո-  
ցեր . և ասոնցմէ զատ բազմութիւն մը  
վիափաքաց և լիրից՝ որ ձեռուլնին հայե-  
լիներ և հատուածածե ապակիներ շար-  
ժելով՝ ամէն վայրկեան նոր նոր գոյներ ,  
նոր նոր տեպեր կու տային տեսածնե-  
րուս : լոյս կարգէ դուրս փայլմունքնե-  
րէն շփոթած՝ չի կրցայ որոշ տեսնալ  
հոգւոյն դէմքը , անոր համար չեմ ալ  
կրնար ձեզի նկարագրել . միայն թէ ին-  
ծի լուսաւոր կերպարանք մը երեցաւ ,  
բոլորովին տարբեր մէկալներէն :

լոյս երջապէս երկայն ատեն սպասելէն  
և ձանձրանալէն ետև , առաջնորդս՝ որ  
հոռմերէն անունով Փիլիսոփայութիւն  
կ'անտանիմ , կ'ըսէր , ցըցուց ինծի հո-  
գւոյն աթոռին քով՝ որոշ կերպով եր-  
կու մեծ պարոններ ազնուական և ծանր

կերպարանօք , ձեռուլնին մէկ մէկ մեծ  
ջահէր բռնած . ուրիշ մ'ալ կար ան-  
զգեստ՝ որ հայլ մը ցըցուց ինծի վրան  
քօղով պատած . “ լոյս տեսածներդ ,  
ըսաւ առաջնորդս՝ են Դանն , Դարի-  
նութիւն և Շամարտութիւնն , զորոնք  
թագաւորը շատ կը պատուէ և կը վախ-  
նայ ” :

— “ Ինծի ալ մէկ վախ մը կը ձգեն  
ասոնք , ըսի : Դայց այն մէկալ վայելուչ  
պարոնը ովլ է , որ անուշ նայուածքով  
և խօսուածքով մը թագաւորին հետ  
ընտանեբար կը խօսի . եկու մօտենանք  
իրենց : — Օ գոյշ կեցիր , ըսաւ առաջ-  
նորդս , վայելութենէն մի խաբուիր .  
գիտցիր որ խորամանկ է . դուն անոր  
գլուխը պսակող ծաղկիներուն կը զմայ-  
լիս , մէկ մ'ալ ոտուրները նայէ ” : լոյս  
նայելուս պէտք ոտիցը տակ տեսայ ա-  
հագին անդունդ մը՝ ուսկից հառաջա-  
նաց ձայներ կ'ելլային :

Դսկէց վերջը մէկիկ մէկիկ տեսայ  
թագաւորին քով՝ կատաղի և խողուա-  
չուի Բարկութիւնը , գեղնած երես՝ լոյ-  
սիանձը , որ ձեռքը թունալից գաւաճ-  
մը ունէր որ իր վրայ կը թափէր , այս-  
պէս ալ դաշնակ մը ունէր որով ինք  
զինքն կը խոցէր : Դահասիրութիւնը  
իր զարդերովը և փայլուն զէնքերովը  
քիչ մը ատեն աշխա յափշտակեց , բայց  
երբոր վրան արեան նշանները տեսայ՝  
սիրտս պաղեցաւ : Դահայութիւնը ինծի  
երեցաւ միանգամայն ծաղըելի և զգ-  
զուելի . քուրջեր հագած , վտիտ , ան-  
հանգարտ մէկ մըն էր , դէզ մը ոսկւոյ  
վրայ նստած , զոր ետևէն տղաքներ կը  
ցրուէին : Դահին ոտքը նստած մէկ  
մ'ալ անդադար լածները կը գրէր .  
բայց ետևէն պղտի ձեր մը կու գար ու  
մանգաղով թղթերուն մեծ մասը կը  
կտըրտէր . մէկէն իմացայ որ գրողը { ի-  
շողութիւնն էր , կտրողը լամանակն :

Դս տեսածներուս վրայօք սկսայ քիչ  
մը միմիթարուիի՝ երբոր տեսայ զ { օ-  
րութիւնը որ Բարութեան ձեռք կու  
տար . զլորդարութիւնը՝ որ կտրիչ ձեռ-  
քով մը կը վոնտէր զլուտը և կը քա-  
ջալերէր զլորդինութիւնն . զ Սափաւու

ըութիւնը՝ որ հանդարտութե՛ք դէմ կը կենար Փափաքաց վազուածքին և Վրից հետ զարնուելուն . և շնորհալի Պարկեշութիւնը՝ որ անկիւն մը քաշուած կը զարդարէր զի՞ւաքինութիւններն ու զի՞առքն : Իսյոյ ամենէն աւելի զարմանքս շարժեց մէկ հարկեոր անձ մը՝ դատաւորի հագուստով . դէմքը թէ քաղցր էր և թէ խիստ . ամենքը պատկառանքով զլուխ կը ծուշին իրեն , բայ ՚ի քանի մը լիրեերէ՝ որ փուշ տեղ կը ջանային զինքը վախցընել . ինքը ոչ շողոքութիւններուն երես կու տար , ոչ հրապուրովիններէն կ'առնուելը . անազաւասիս ամենուն խնդիրն ալ գանգատն ալ կը լսէր : Ի՞սկեւ գեղեցիկ պսակ մը կար անթառամ ծաղկըներէ . բայց ետեր սև ու ու տձեւ աշռելի մարդ մը կար՝ փշածայր խարազան մը բռնած միշտ սպառնալով : Ուագաւորը մտազրութեամբ այս ամէն բանին վրայնայելով , ամէն անգամ բան մը որոշելէն առաջ այս հարկեոր անձէն խորհուրդ կը հարցընէր . “ Իսիկայ տէրութեան մեծ գատաւորն է , ըստ առաջնորդս , ասիկայ է Պատակցութիւնն , ուսկից թագաւորնիս կը վախնայ . պէտք է որ միշտ իր խորհրդովը վարի և հաւանի անոր . և թէ որ երեեմն ասոնք իրարու հակառակին՝ ամէն տեղ խռովութիւն կ'ըւլայ . Խիբերը սանձերնին կը կոտրեն , Ախտք համարձակութիւն կ'առնուն . Հոգին աթոռէն կ'իխնայ , տէրութիւնն հազար ու մէկ շարեօք կը լեցուի , և ամէն բան տակն ու վրայ կ'ըլլայ , թէ որ այն սև մարդը՝ ուսկից սոսկացիր՝ և որուն անունն է Օ իղնորէն հաւասարակութիւն ընէ , և թագաւորը ըղարձընէ իր աթոռը , նախ աղէկ մը պատժելով , ինչպէս կը վայէ իր աստիճանին և պատույն : Իսյոյ առամրդն ալ կը տեսնան հեռուէն , անիկայ շատ անգամ . կը խափանէ Օ իղն ալ , ատիկայ է Խովորութիւնը՝ միշտ նոյն անփոփոխ աննշան դէմքով , ձեռքը անուշ շղթայ մը կայ բայց ծանր է , չարին ալ բարւոյն ալ անտարեերէ . անոր համար հիներէն մէկը լաւ ըսեր է ատոր՝ ( ) ”

ժանդակ ախտից և լաւութեանց : Իր ամենէն մեծ չարիքն է գիտակցութեան ձայնը խափանեն , որով զրեթէ ամէն բան կը կորսուի :

“ Դրդ հիմայ ամէն բան Ճանցար , երկիրն ալ , բնակիչներն ալ , թագաւորն ալ , արքունիքն ալ , խորհրդարանն ալ . եկու քիչ մ’ալ մօտեցիր , վասն զի մեծ շարժմունք մը կը տեսնամ : կ’երեայ թէ թագաւորը մեծ բան մը պիտի որոշէ և հարկաւոր հրամաններ պիտի տայ . . . ”

Ուստեցայ ես ալ վախնալով մը և հետաքրութեամբ : Տեսայ որ Պահա սիրութիւնը կը ստիպէր զթագաւորը որ հաւանի իր ուղածներուն և յանձն առնու մէկ գործողութիւն մը՝ որ շատ հարկաւոր է կ’ըսէր տէրութեան օգտին և փառքին համար . Ի՞սձնասիրութիւնն ալ վկայութիւն կու տար անոր . և շատ օգուաններ կը ցուցընէր անկեց , Հպարտութիւնը՝ կորուկ ձայնով մը կ’ըսէր , վախ չկայ այդ բանիդ մէջ . Իսարկութիւնը կը յիշեցընէր թագաւորին օտար թագաւորի մը իրեն հասուցած խասըր . Կախանձն ալ չէր կը նար քաշել անոր մեծնալը . Ուգաչութիւնն ալ մեծ հարստութիւն կը խոստանար տէրութեան այն գործքով : Ուագաւորն՝ ինչպէս ինձի երեցաւ մէկիկ մէկիկ լսեց այս ամէն Վրից , և քիչ մը պաղութիւն միտսնգամայն և անհանգստութիւն ցըցուց՝ երբոր Զափաւորութիւնը և Կահէմութիւնն եկան ցուցընելու այն գործքին մէջ եղած անպատշաճութիւնները . այն ատեն Ի՞րդարութիւնը և Բանն՝ ծանր ձայնով մը ըսին միաբան . ” Ի՞սիրաւ է քեզի առաջարկուած բանը , ուստի չի ալ կրնար օգտակար ըլլալ . . . Ուագաւորն գեռ քիչ մը կը տարակուակըր , այն ատեն Պիտակցութիւնն առաջ եկաւ ու ըստ . “ Տարակուսելու բան չկայ , Ուրդարութեան և Բանին ըսածին մտիկ ըրէ . մէկ գի թռող մոլի Վրից խօսքերը , և Կանիուկիսի ըսածը մի մուռնար . Զարերը տեսնալ և լսել անոնց՝ չարութեան սկիզբ մըն է . . . Այս որ ըստ Հոգւոյն ըրուդին պատած լցար քիչ մը կարմըցաւ . ”

և լսեցի թագաւորին անոյշ ձայնը՝ որ հրամմեց Գահափրութեան որ լուռ կենայ, և մէկ մ'ալ այն անփրաւ խնդիրը առ առաջ ըքերէ:

Կոկէ ետև տեսայ որ Հեշտութիւնն թագաւորին ծաղկընէր և պտուզներ հրամցուց. Հիմենը՝ և Բանն ալ մէկ տեղ ըլլալով Գիտակցութիւնը ժպտեցաւ, Հոգին ալ ընդունեցաւ ընծաները: Քիչ մը ատենէն նորէն դարձաւ Հեշտութիւնը՝ դիմացէն Ախտը առաջնորդ առած, ետևէն ալ քանի մը անպարկեց փափագները. Արբեցութիւնն ալ մէկտեղէր. Հեշտութիւնը ցըցուց թագաւորին գեղեցիկ և լեցուն կողով մը՝ որուն վրայ Խորհրդաւորութիր թանձրքող մը ձգեր էր. Հոգին փորձուեցաւ, բայց Արաքինութիւնը մէկդի հրեց զկողովը: Ամօթխածութիր լալով քաշուեցաւ. Խորհրդաւորութիր՝ մեղմով հրապուրել սկսաւ, բայց Գիտակցութիւնը ծանր ձայնով մը ըսաւ այս հին իմաստնոց զրոյցը. “Ախտքդ բեր խղճի մտաց խայթը. անիկոյ այս ջահիս պէս կը փարատէ մեղաւորին ըորս դին պատած խաւարը”:<sup>1</sup> Այս որ ըսաւ՝ Ամօթխածութիւնն նորէն առաջ եկաւ, և թագաւոր խիստ կերպով մը հրամմեց Հեշտութեան որ մէկդի երթայ:

Այս ամէն բան տեսնալով և լսելով զմայլած՝ ըսի ինծի առաջնորդող Խլքին. Ալ տեսնէն որ այս տէրութեանս կառավարութիւնը քու կարծածիդ չափ դժարութիւնի եղեր. իրաւէ որ վտանգաւոր Խլքեր և հրապուրիք Ախտեր կան. բայց Հոգին ինչուն պիտի վախնայ, երբ ունի խորհրդական զԱրդարութիւն և զԲանն, և իրեն ազգարար՝ Զափաւորութիւնը և Պարկեշտութիւնը, Գիտակցութե տիրաբար խրամը և Օըղմանն վախը. ասանկ պաշտօնեաներ ունենալէն ետև չի կրնար խաբուիլ, և պէտք է որ միշտ խելացի խորհրդոց չետեի: Այսնկ ըլլալով՝ ես շատ գոհ եմ այս տէրութեանս վիճակին վրայ:<sup>2</sup>

“Իռուն շատ շուտով կը գոհանաս,

1. Հարսանիքը:

ըսաւ առաջնորդս, և շուտով միտքդ կը շինես. բան մը առջի տեսնալուն պէտք չէ դատել: Ունէ որ ես չեմ խաբուիր, սա պատի կախարդը որ հեռուէն կռագայ՝ մէծ խռովութիւն պիտի ձգէ հոս, և կարելի է ցաւալի տեսարան մը բանայ շատ տարբեր ինչուան հիմայ տեսածներէդ: — Խնչ, ըսի, հոս տեղ ալ կախարդ կը գտուի: — Լան, ըսաւ առաջնորդս, հոս ալ երկու կախարդ կան. մէկը բարի և օգտակար է, Այրեակայութիւն կ'ըսաւի, ամէն բան կը կենդանայընէ կը զարդարէ. իրաւ միշտ ինծի և Բանին համաձայն չըլլար, բայց մենք կը ներենք իր պակսութեանը, որովհետեւ ինքն է մեզի մեր չնորհքը տուողը, թէ որ ինքը մեզմէ զատուելու ըլլար, ամէն բան ձանձրալի կ'ըլլար. աշխարհս ալ մեզի անապատ մը կը դառնար: Լան ցամաք և տիսուր միտքեր՝ որ զինքը կը վանտեն. բայց մենք կը սիրենք զաս և անոնց վրայ կը ծիծաղինք. ինչուան երբեմն ձմարտութիւնն ալ կը թողու՝ որ անիկայ շտկէ իր զարգարանքը, և անով ալ աւելի գեղեցիկ կ'երեւայ: Բայց իրեն եղթայրը որ Հիմարութիւն կ'ըսաւի, աշխարհիս ամենէն վտանգաւոր կախարդն է. ամէն տեղ կը մտնէ և մէկ տեղ մ'ալ չերեւար. և անոնք որոնց վրայ կը տիրէ՝ ամենեւին չեն տեսներ զինքը: Այս կախարդը իմամենէն մէծ թշնամիս է. շատ հեղ այդ չարածածիկը իմանուամբս և իմ կերպարանքովս կը մտնէ ամենէն մէծ չարիքներն առաջ տանելու. ամէն ձև կը մտնէ, ամէն բան կրնայ փոխել. ինքն է որ զՀոգին կը մօլորցընէ, Բանը կը շուարեցընէ, և ինչուան երբեմն զԱխտակցութիւնն ալ կը խաբէ: Ախայն ես եմ որ զինքը կը ձանչնամեւ կը հալածեմ. բայց ինչ ընեմ որ շատ հեղ ջանքս պարապը կ'ելլայ: Ահա իմ կարողութեամբս հիմայ քեզ ցուցընեմ զայն. նայէ, ահա կը մօտենայ հոս, նոր չարիքներ բերելով:

Օարմացած զլուխս դարձուցի առաջնորդիս ըսած կողմը և տեսայ կարձահասակ մարդ մը, ձեռքը ցցունա-

յուապ՝ մը առած, երեսը դիմակ անցուցած, վրան ամէն գունով լաթի կտորներէ շինած զգեստ մը՝ բոժոժներով զարդարած, որոնց ձայնը զիս կը ձանձրացրնէին, թէպէտ և ուրիշները չէին լսեր. յաղովրդեան մէջէն անցած ատենը՝ ցցնայրապովը ամէն հանդիպածին դպաւ: Ո՞էկ մ'ալ ի՞նչ տեմնամ, ամէնքն ալ կերպարանափոխ եղան. Գահասիրութիւնը՝ Փառք դարձաւ, Շխտը՝ Շռաքինութիւն, Հեշտութիւնը՝ Երջանկութիւն, Ո րէժինդրութիւնը՝ Ո րդարութիւն, Խմաստակութիւնը՝ Երդիւնականութիւն, Շ աղփառփութիր՝ Դիտութիւն, Շ ուայլութիւնը՝ Շարերարութիւն, Հանդկնութիւնը՝ Ո րիութիւն, Խորամանկութիւնը՝ Քաղաքագիտութիւն, Պղերգութիւնը՝ Խոչեմութիւն, Երդաւորութիւնը՝ Շարեպաշտութիւն: Ըստագաւորին քով ամէն բան խառնափնդոր եղաւ. Շխտք ու կիրք խառնածայն գոռում գոչումով թագաւորին ականջները խըլուցին, սուստ մուտ խօսքերով խաբխըրեցին, մեծ մեծ խոստմունքներով հրապուրեցին: Փառասիրութիւնն յուսով գինովցուց զանիկայ, Հեշտութիւնն փափաքները գրգռեց, Ո րէժինդրութիւնն կը խոստանար իրեն ապահովութիւն, Խարէութիւնը Խոչեմութեան պտուղներ կ'ընծայէր իրեն, Երդաւորութիւնը դժոխքի կողմը կը դարձընէր զինքը ու երկինք կը ցուցընէր: Ո ւ ուր կը մնային Ո րդարութեան և Շանին ձայները. չարածճիկ Օ րպարտութիւնն և աներես յաղըրածութիւնն հետացուցեր էին անկէ զ Ո րպինութիւնն և զ Ճ շմարտութիւն. ինչուան Դիտակցութիւնն ալ Ո եղկութեան գիրկը թմրած՝ զոր հանգիստ կը կարծէր, քանի մը տկար խօսք հազիւ ըստ. բայց սակայն այն խօսքերն ալ բաւական եղան չոգւոյն կանկ առնել տա-

<sup>1</sup> Երբոր Յիմարութիւն կը նկարէն՝ ձեռքը գաւազան մը կու տան՝ ծայրը մարդու գիտով, գլուխն ալ գդակ մը անցուցած բոժոժներով զարդարուն. Գաղղիարէն ասոր Մարտե կ'ըսեն, որ մենք հիմայ Ցցունացուապ ըսինք:

լու. և երբոր գեռ կը տնանաբ՝ Շ ողոքորթութիւնն սողալով առաջ եկած ձեռքը ինսկանոց մը առած: Ո յս իշխանաց գեղատուն՝ նախ ինսկելովթագաւութին խելքը գլխէն տարաւ, վերջը վարպետութեամբ մը ձայնը փոխելով հասարակաց կարծեաց ձայնն առաւ ու ըստ. “ Ո վ թագաւոր, ինչու գէմ կը կենած ասաւ. Փառք և Երջանկութիւնն ոտքի եկեր են. յանձն առ բոլոր տէրութեանդ կամքը կատարելու „: Ո յս ըսելովք բաւ ձգեց զ հ ոգին Հաճոյից գիրկը Շխտք և կիրք ըրս գին առին:

Ի՞նչպէս նկարագրեմ հիմայ այս ցաւալի զինողութեան հետեւանքը: Ո յն վայրկենէն՝ ամէն զի անկարգութիւն տիրեց. տէրութիւնը՝ խոռովութեանց և անիշխանութեան ձեռք ընկաւ. կրակ մըն էր որ ամէն բան կ'երէր կը մրկէր, որածութեան պէս ցաւ մը բոլոր երկրին մէջ տարածուեցաւ. ոչ ձար կայ, ոչ դեղ կայ, ոչ սանձ մնաց: Ո վլեգնութիւնը ինքնիշխան եղած՝ մնաց մնաց որ ամէն բան ոչինչ գարձնէ: Խմ իմաստուն առաջնորդս գրեթէ յուսահատեր էր. ձեռքէն բռնեցի, “ Ո յի վախնար, ըսի սիրա ըրէ, եկու ազատենք զմեզ ալ տէրութիւնն ալ, վասն զի դեռ յօս կայ ազատելու: Ո չա կը տեմնամ շոքին մէջ որ Դիտակցութիւնը կ'արթըննայ ու կը ճաննայ զ Ճ շմարտութիւնը. ահա մեզի կը մօտենայ. ելիր՝ երթանք հետք: տը: — Ես ալ ասոր կը սպասէի, ըստ առաջնորդս „: Ո նէկէն ելանք գայլիք թագաւորին քով. Ճ շմարտութիւնը հայլին ցըցուց. Դիտակցութիւնն կանչեց զ Օ իղջը՝ որ բռնեց զ հ ոգին և շարացար պատժեց. թագաւորը լարվ ելաւ աթոռը. Խմարութիւնը աներեցիթ եղաւ. ամէնքն ալ իրենց առջի կերպարանքը առին, ամէն բան առջի կարգը մտաւ:

Ո յս տեսարանիս և այս յաղթաթեանս վրայ՝ որ իմ վարպետութեամբս եղած կը սեպէի՝ առանց ընկերս մտածելու, այնչափ ուրախացայ՝ որ առաջնորդս թողլով սկսայ ինքնիր գլխուս առաջ երթալ. և համարձակ թագաւո-

բին գահուն աստիճանները ելլալ, որ երթամբ՝ անին աթոռը նստիմ, որ կը սեղէի թէ ալ ինծի կը վայլէ. բայց Շամարտութիւն ժամանակ կը խաբուիս ըստ, Խմաստարկութեան աթոռն է որ կը նստիս : Այս ըստ, ատենը ամէն կողմէ վրաս ծիծաղ մը փրթաւ. և իմ ամօթով շփոթած ատենս Օխզն ալ ելաւ՝ իր ձաղկոցովը անանկ սաստիկ զարկ մը զարկաւ կը ունըիս՝ որ վար գլորեցայ. աչքս բացի, մէկ մ'ալ տեսնամ որ անկողնիս մէջ եմեղեր, և ձամ բորդութիւնս ալ տեսիլք մըն է եղեր, որ ձեզի պատմեցի՝ որ խելք սովորէ, ինչպէս ես սովորեցայ :

ՍԵԿԻՒՐ

## ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԼՈՒՐ ԵՒ ՏԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Բ.

Բարձր հայու. — Խնեղեաց :

ՓՈՔԻ Հայոց սահմաններէն շուտով անցնելով՝ հասայ Պայլ գետին եղելքը Խրզնկայի կողմերը, ուր որ Ո՞ւծ Հայոց՝ բնիկ Հայաստանին սահմանը կը սկսի: Խարայելացւոց առաջին անգամ Խարմիր ծովուն մէջ մտնելուն նման սոսկում մը և զարմացք մը հանդերձ ինդութեամբ պաշարեց զիս՝ երբոր այս գետէս անցնելու եղայ, իմ հայրենի յիշատակներս մտածելով. սիրտս մեծամեծ զարնուածքով թունդ կու տար, մտածածս գրեթէ աչքիս առջև մարմնացեալ կը տեսնէի: Խուես զառնալով կը տեսնէի նոր Փարաւոն մը և նոր Ո՞վսէս մը, երկուքն ալ առջինէն աւելի զարմանալի և ինծի սիրելի. հոս երկուքն ալ բարեկամարար գետէն անցան. բայց երբ անդին հասան, այս նոր Փարաւոնս խառացաւ Հայոց Ո՞վսիսին վրայ, տանջեց զանիկայ, ինքն ալ տանջուեցաւ Այսուծմէ. ինչուան որ խոնարհելով և հաշտուելով իր հին

բարեկամին հետ, անոր ձեւքով գտաւ իր և իւր ազգին փրկութիւնը, հեթանոսութեան ալեկոծեալ ծովին մտնելով յեկեղեցւոյ նաւահանգիստը: — Այս գետս էր որ ինծմէ 1560 տարի առաջ անցուց իր արծաթափայլ ալեացը վրայ զմեծն Տրդատ և զմեծն Պրիգոր՝ Հայաստանի Ուսաւորիչներն և ազատիչներն. այն անգին աննման զոյգը, որոնց արդիւնքը, փառքը և յիշատակը Խրարատու կրկնազլուկս բարձր լերանց մէ ալ բարձր կեցած են Հայոց ազգին պատմութեան մէջ: 26 տարի էր որ Հայաստան շունչը բռնած կը սպասէր այն քաջագործ հսկայ թագաւորին՝ որ գայ ազատէ զինքն Ասամնեանց բռնութենէն: 26 դար էր՝ որ Հայաստան հոգին բռնած կը սպասէր այն սրբագործ արի Հայրապետին՝ որ գայ ազատէ զինքն սատանայի բռնութենէն: Խնչ աննման ինչ երջանիկ օր էր այն օրն, որ Տրդատ և Պրիգոր իրենց մեծագործ մէկմէկէ տարբեր և մէկմէկու անյայս ընելիքներն սրտերնուն մէջ կարգաւորելով՝ անցան այս տեղերէս և մտան ՚ի Հայաստան: Պարնանային հովուն հրաւերքին պէս համբաւը հասաւ Պարսից ցրտութենէն ցրուած հայ կտրիծներուն, որոնք իրենց ձմերոցի պէս ամոււր տեղուանքը քաշուած կը նստէին: Հայրենասիրութեամբ արծաթուած բռնաւորաց զգուշութիւններէն անցան, եկան իրենց բնիկ տէրը, իրենց Խրակունի պասակը զիմաւորելով ընդունելու: Այն առիւծասիրու հսկայակերպ թագաւորը՝ որ միայն պատերազմնաց և ասպարիզաց մէջ քաջաց ու գազանաց արիւն կը թափէր, իր հայրենի հողը կոխսած ատենը՝ կարծեմ առջի անգամն էր որ հայրենակցաց լալախառն խնդրումն տեսնելով՝ չի կրցաւ բռնել իր ահաւոր աջուլները կրակէ արցունքներէ: Այն օրն այն արցունքներն Հայաստան իր Եղիքատայ ու Երասխայ աղբիւրներէն պատուական սեպեց իրեն: Հազար և կէս հազար տարիէն ալ աւելի անցեր էր այս զիմաւածին վրայ, սակայն այս օր ես ալ չի կը ը-